

**Հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում
դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային
գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման,
ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող
պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի
2010 թվականի մարտի 26-ի նիստում**

**ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ 2010 – 2013թթ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Տեսլականը

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) կանխարգելման ու քրեական հետապնդման կարողությունների զարգացում, ՓԼ/ԱՖ հանցագործությունների պատժելիության ապահովում, դրանց նկատմամբ հասարակական անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորում:

Որակական փոփոխությունները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի երկրորդ սերնդի բարեփոխումներին անցում, որի բնորոշիչները կհանդիսանան.

1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարզ օրենսդրությունից ՖԱԹՖ-ի ստանդարտներին լայնորեն համապատասխանող և իրավական ստորակարգման մի շարք մակարդակներից կազմված օրենսդրությանն անցում.
2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների հավասարապես ներդնում և կիրառության ապահովում հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից (ֆինանսական հաստատություններ և ոչ ֆինանսական հաստատություններ կամ անձինք).
3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մեխանիզմների համասեռ ներդրումից այդ մեխանիզմների՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ գործարկում.
4. ՓԼ/ԱՖ քրեական հետապնդման և դատաքննության գործառույթների մասնագիտացվածության և առկա պրակտիկայի հիման վրա արդյունավետ, օպերատիվ ու միասնական գործելաոճի ընդունում:

Արժեքները

Սույն ռազմավարությունն իրականացնելու համար ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի բոլոր մասնակիցները պետք է խստորեն հետևեն ու հավատարիմ լինեն հետևյալ արժեքներին.

1. Պրոֆեսիոնալիզմ
2. Արդարություն
3. Համագործակցություն
4. Փոխադարձ հարգանք
5. Վստահություն
6. Ընթացիկ աշխատանքներում անհրաժեշտ գաղտնիություն, ծրագրերի և արդյունքների հրապարակայնություն
7. Նախաձեռնողականություն

Ռազմավարական ուղղությունները և դրանց արդյունքները

No	Ռազմավարական ուղղություններ / նախանշված միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ	Ներգրավված գերատեսչություններ և հաստատություններ	Պահանջվող լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ
1	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում համաձայնեցված պետական քաղաքականություն				
1.1	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) շրջանակներում անհրաժեշտ բոլոր ռազմավարական խնդիրների և միջոցառումների քննարկում և դիրքորոշումների համաձայնեցում	Ռազմավարական խնդիրների և միջոցառումների հարցում համաձայնեցված դիրքորոշումների առկայություն	Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ	չի պահանջվում	2010-2013
1.2	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում գերատեսչությունների և հաստատությունների կատարած գործողությունների արդյունքների վերաբերյալ Միջգերատեսչական հանձնաժողովի առջև պարբերական հաշվետվողականության մեխանիզմի սահմանում	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում կատարված գործողությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն, կատարողականի ապահովում	Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարություն	չի պահանջվում	2010-2013
2					
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային ստանդարտներին համապատասխանող իրավական համակարգի ձևավորում					
2.1	Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի (ՄԱՆԻՎԱԼ) և Արժույթի	- ՖԱԹՖ-ի ստանդարտներին լայնորեն համապատասխանող,	Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ	չի պահանջվում	2010-2011

	<p>միջազգային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ ներկայացված երաշխավորությունների հիման վրա ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական համակարգի զարգացում</p>	<p>տարբեր ոլորտների առանձնահատկությունները հաշվի առնող և իրավական ստորակարգման մի շարք մակարդակներից կազմված օրենսդրական ակտերի ընդունում, դրանց կիրառության վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների հրապարակում, - ՄԱՆԻՎԱԼ-ում նախատեսվող Հայաստանի Հանրապետության առաջընթացի հաշվետվությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական համակարգի՝ ներկայացված երաշխավորություններին համապատասխանեցման արձանագրում</p>	<p>գերատեսչություններ և հաստատություններ</p>		
2.2	<p>ՄԱՆԻՎԱԼ-ի 4-րդ փուլի գնահատման նախապատրաստում և անցում</p>	<p>- Գնահատման համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, անհրաժեշտ այլ կազմակերպչական միջոցառումների համակարգված իրականացում. - 3-րդ փուլի գնահատման</p>	<p>Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ</p>	<p>չի պահանջվում</p>	<p>2012-2013</p>

		հաշվետվության համեմատ 4-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի առաջընթացի արձանագրում			
3	ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի (ՖԴԿ)՝ որպես ֆինանսական հետախուզության մարմնի կարողությունների զարգացում				
3.1	ՖԴԿ կողմից վերլուծական ծրագրային համակարգերի ձեռքբերում/մշակում և ներդրում վերլուծությունների գործընթացում	ՓԼ/ԱՖ վերլուծությունների՝ քրեական հետապնդման համար կիրառելիության բարելավում	ՖԴԿ	Կենտրոնական բանկի բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013
3.2	ՖԴԿ կողմից էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և գործերի կառավարման ծրագրային համակարգի մշակում և ներդրում	ՖԴԿ ներքին գործընթացների օպտիմալացում	ՖԴԿ	միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2011
3.3	ՖԴԿ կողմից ՓԼ/ԱՖ միտումների և սխեմաների վերաբերյալ ռազմավարական վերլուծությունների կատարում՝ միջազգային տիպաբանությունների ներդրման և մշակման միջոցով	ՓԼ/ԱՖ միտումների և սխեմաների վերաբերյալ վերլուծությունների պարբերաբար ամփոփում և հրապարակում	ՖԴԿ	չի պահանջվում	2010-2013
3.4	ՖԴԿ աշխատակիցների համար օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններում գործնական ուսուցման դասընթացների կազմակերպում	Օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների փորձի ներդրում ՖԴԿ աշխատանքներում	ՖԴԿ	Կենտրոնական բանկի բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013

4	ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության ու քրեական հետապնդման կարողությունների զարգացում				
4.1	Քրեական հետապնդում իրականացնող մարմիններում ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության ու քրեական հետապնդման մասնագիտացված ստորաբաժանումների ձևավորում	ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության ու քրեական հետապնդման արդյունավետության բարձրացում	ՀՀ դատախազություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ պետական բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013
4.2	Քրեական հետապնդում իրականացնող մարմիններում և դատարաններում ՓԼ/ԱՖ օպերատիվ հետախուզության, քրեական հետապնդման և դատական քննության մասնագիտական հմտությունների զարգացում՝ վերապատրաստումների և ուսուցման միջոցով	ՓԼ/ԱՖ պատժողական գործառույթի արդյունավետության բարձրացում	ՀՀ դատախազություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն, ՀՀ պետական եկամուտների կոմիտե ՀՀ դատական դեպարտամենտ	ՀՀ պետական բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013
5	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկող մարմինների կարողությունների բարելավում				
5.1	Ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ վերահսկողություն գործընթացում ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների համապատասխանության ստուգման կարողությունների զարգացում՝ ուսուցումների, վերապատրաստումների, ուղեցույցների պատրաստման և այլ	Ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների գործունեության՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական պահանջներին համապատասխանության երաշխավորում	ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	ՀՀ պետական բյուջե, ՀՀ կենտրոնական բանկի բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013

	եղանակներով				
6	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միասնական տեղեկատվական համակարգի ձևավորում				
6.1	<p>- ՀՀ իրավասու գերատեսչությունների տվյալների շտեմարանների (մասնավորապես՝ ՀՀ Ոստիկանության անձնագրային և տեղեկատվական կենտրոնի, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարանների) համակցում ՖԴԿ տվյալների շտեմարանին,</p> <p>- Այդ տվյալների շտեմարաններին ՖԴԿ համար ուղղակի և այլ իրավասու մարմինների անուղղակի (հարցումների միջոցով) հասանելիության ապահովում</p>	ՓԼ/ԱՖ ֆինանսական վերլուծությունների համար հնարավորինս լայն տեղեկատվական ռեսուրսի ձևավորում և այդ վերլուծությունների ամբողջականության ու արժանահավատության բարելավում	Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ	ՀՀ կենտրոնական բանկի բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013
7	Հաշվետվություն տրամադրող անձանց մոտ ՓԼ/ԱՖ կանխարգելման կարողությունների զարգացում				
7.1	Հաշվետվություն տրամադրող անձանց ներքին դիտարկումների գործառույթն իրականացնող աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացում՝ ուսուցումների, վերապատրաստումների, որակավորման և ուղեցույցերի տրամադրման միջոցով	Հաշվետվություն տրամադրող անձանց մոտ ՓԼ/ԱՖ կանխարգելման արդյունավետ մեխանիզմի առկայություն	ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ինքնակարգավորվող կազմակերպություններ	ՀՀ կենտրոնական բանկի բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013

7.2	<p>Հաշվետվություն տրամադրող անձանց ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերի օրենսդրությանը համապատասխանության և կիրառելիության ապահովում՝ այդ ակտերի պարբերական դիտանցման, վերահսկողության ժամանակ կիրառության արդյունավետության ստուգման միջոցով</p>	<p>Ֆինանսական հաստատություններում ՓԼ/ԱՖ կանխարգելման մեխանիզմների նկարագրություն, դրանց կատարման ապահովում</p>	ՖԴԿ	չի պահանջվում	2010-2013
7.3	<p>Հաշվետվություն տրամադրող անձանց ՓԼ/ԱՖ ռիսկերի վրա հիմնված մոտեցման ներդրմանը խրախուսում</p>	<p>Իրավական ակտերի և ուղեցույցերի հիման վրա ֆինանսական հաստատությունների կողմից ՓԼ/ԱՖ ներքին ռիսկերի գնահատում և դրանց հակազդման արդյունավետ մեխանիզմների առկայություն</p>	<p>ՖԴԿ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ինքնակարգավորվող կազմակերպություններ</p>	միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013
7.4	<p>Ոչ ֆինանսական հաստատությունների կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման իրավական պահանջների պատշաճ կիրառելիության ապահովում՝ ուսուցումների, վերապատրաստումների,</p>	<p>Ոչ ֆինանսական հաստատությունների՝ ՓԼ/ԱՖ նպատակներով օգտագործման ռիսկի նվազեցում</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԿԱ անշարժ գույքի</p>	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ կենտրոնական բանկի բյուջե, միջազգային դոնորական</p>	2010-2013

	որակավորման, ուղեցույցերի տրամադրման միջոցով		կադաստրի պետական կոմիտե, ոչ ֆինանսական հաստատությունների ինքնակարգավորվող կազմակերպություններ	ֆինանսավորում	
8	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներպետական համագործակցության ամրապնդում				
8.1	Իրավասու գերատեսչությունների և հաստատությունների միջև երկկողմ համագործակցության արդյունավետ մեխանիզմների ներդրում՝ փոխադարձ խորհրդատվությունների, համատեղ աշխատանքային խմբերի ստեղծման, համաձայնագրերի ստորագրման և այլ միջոցներով	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներպետական ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ մեխանիզմների արդյունավետ համադրում	Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ	չի պահանջվում	2010-2013
9	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդում				
9.1	ՄԱՆԻՎԱԼ-ի և ՓԼ/ԱՖ հակազդման Եվրասիական խմբի աշխատանքներին ակտիվ մասնակցություն	ՖԱԹՖ-ի տիպի նշված կառույցներում աշխատանքի միջոցով Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ներկայացում միջազգային պրոֆեսիոնալ հանրությանը	Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ	ՀՀ պետական բյուջե, ՀՀ կենտրոնական բանկի բյուջե, միջազգային դոնորական ֆինանսավորում	2010-2013
9.2	Էզմոնտ խմբի շրջանակներում օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ	ՖԴԿ՝ որպես ֆինանսական հետախուզության մարմին, կարգավիճակի միջազգային	ՖԴԿ	ՀՀ կենտրոնական բանկի բյուջե	2010-2013

	<p>համագործակցության ընդլայնում՝ թեկնածու ՖՀՄ-ների հովանավորման, անդամ ՖՀՄ-ների հետ համագործակցության համաձայնագրերի ստորագրման, տեղեկատվության արդյունավետ փոխանակման, ինչպես նաև Էզմոնտի շրջանակներում դրսևորվող նախաձեռնություններին ակտիվ ներգրավման միջոցով</p>	<p>ամրապնդում և պրոֆեսիոնալ վարկանիշի բարելավում</p>			
9.3	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված միջազգային այլ կառույցների հետ աշխատանքների իրականացում՝ այդ կառույցների աշխատանքներին ներգրավման, դրանցից տեխնիկական օժանդակության ստացման և նշված կառույցների միջոցով ուսումնական ծրագրերի կազմակերպման միջոցով</p>	<p>Այլ միջազգային կառույցներում Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ներկայացում, միջազգային ռեսուրսների օգտագործում նշված համակարգի բարելավման նպատակով</p>	<p>Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ</p>	<p>Միջազգային դոնորական ֆինանսավորում</p>	2010-2013
9.4	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված իրավապահ և վերահսկող մարմինների և օտարերկրյա մարմինների միջև երկկողմ հարաբերությունների խորացում՝ համագործակցության համաձայնագրերի ստորագրման, փոխադարձ շփումների,</p>	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրավասու իրավապահ և վերահսկող մարմինների արդյունավետ համագործակցության իրականացում օտարերկրյա համանման մարմինների հետ</p>	<p>Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչություններ և հաստատություններ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>	2010-2013

	տեղեկատվության փոխանակման և այլ միջոցներով				
--	---	--	--	--	--